ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման հանձնաժողովը,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանական դպրոցի շրջանավարտների որակավորման քննությունների ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

հաշվի առնելով որակավորման քննության արդյունքներն ըստ ծածկագրերի գնահատված լինելու, ինչպես նաև ծածկագրերին համապատասխանող հավակնորդների անուն, ազգանունների ցուցակները կնքված արկղերում տեղադրված լինելու հանգամանքը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 93-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. ***Ամփոփել հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքների գնահատականները՝ համաձայն հավելված** 1-ի:*
2. ***Ամփոփել դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքների գնահատականները՝ համաձայն հավելված** 2-ի:*
3. ***Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի** 4-րդ հարկում գտնվող ցուցատախտակի վրա:*
4. *2019**թ. մայիսի** 3-**ին ժամը** 17^{00}-**ին ք.Երևան, Զաքյան** 7-2 **հասցեում գտնվող Պալատի շենքի** 4-**րդ հարկի մեծ դահլիճում բացել կնքված արկղը և հանել ծածկագրերի թերթիկները**:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 5-1-**Ա**
ք. **Երևան**
03 **մայիսի** 2019**թ**.